ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐՋ (XV – XVII դդ.)

Ա.Ա.ԽԱՌԱՏՅԱՆ

Օսմանյան թուրքերի կողմից 1453թ. նվաճվելուց հետո Կոստանդնուպոլիսը (Ստամբուլ) իր երկրորդ կենսագրությունը սկսում էր իբրև կրոնական տարբեր հանրություններով բնակեցվող մի այլ կայսրության մայրաքաղաք: Մահմեդ Ֆաթիհի ժամանակ արդեն մահմեդական տիրող ազգաբնակչության կողքին այստեղ ձևավորվեցին հույն, հայ և հրեա համայնքները: Սրանց պաշտոնական ճանաչումը պետության կողմից վկայում էր, որ օսմանյան տիրակալներն իրավական իմաստով սկսում էին նվաճված ազգաբնակչությանը միլեթների (համայնքների) համակարգի մեջ ընդգրկելու գործընթացը: Այս համակարգը, սակայն, ի սկզբանե պետք է բնորոշվեր իր բաղկացուցիչ մասերի ներքին հակամարտություններով, որքանով տիրապետող ժողովուրդը հանդես էր գալիս նաև որպես տիրապետող կրոնը դավանող ժողովուրդ: Մեհմեդն իր նոր մայրաքաղաքը վերածեց օսմանյան ծավալված կայսրության միյուրօրինակ մանրանկարի. այն վերաբնակեցվեց մահմեդական, հույն, հայ, հրեա, սլավոն տարբերով, որտեղ մի հայտնի չափով թվական գերակշռություն ունեին առաջինները: Կրոնական այս համայնքներն առանձնացվեցին դավանական, ավանդութային և մշակութային կարգավիճակով՝ խմբվելով իրենց կրոնապետերի շուրջ: Հույն պատրիարքությունից հետո սկզբնավորվեց Կոստանդնուպոլսի հայ հոգևոր վարչությունը՝ առաջնորդ եպիսկոպոսի (հայրապետ) գլխավորությամբ:

Միլեթների համակարգ ստեղծելիս օսմանյան տիրակալները ելնում էին մահմեդական հանրային իրավունքի և իրենց նվաճողական քաղաքականությունից բխող պայմաններից՝ մի որոշ չափով հենվելով նաև բյուզանդական ժամանակներից մնացած դավանական հանրությունների բաժանվածության սկզբունքի վրա:

Հայտնի է, որ ավանդական հայ պատմագրությունը 1461թ. ի վեր Կոստանդնուպոլսի հայ համայնքի կենսագրությունը սկսում է Մեհմեդի կողմից մայրաքաղաքում հայ պատրիարքության հաստատումով և Պրուսայի հայերի առաջնորդ Հովակիմի՝ պատրիարք նշանակվելով[1]: Հովակիմի պարագան այժմ մի կողմ թողնելով՝ նկատենք, որ վաղուց ի վեր հայտնի է, որ դեռևս բյուզանդական ժամանակներում Կոստանդնուպոլսում կային հայ կաթողիկոսների կողմից հաստատված առաջնորդներ: Սա արդեն կարևոր հիմք և նախապայման է այն իրողության, որ այնտեղ գոյություն ուներ հայ համայնք՝ իբրև կրոնական առանձին միավոր՝ երկաբնակ դավանանքի այդ մայրաքաղաքում: Կղեմես Գալանոսը նշում է, որ 1307թ. Սսի եկեղեցական ժողովին մասնակցել է

---

[1] *Մ. Զամչեան, Պատմութիւն Հայոց, Հ.Գ, Վենետիկ, 1786, էջ 5:*

[2] *Ա. Պալճեան, Պատմութիւն կաթուղիկէ վարդապետութեան ի Հայս, Վիեննա, 1878, էջ 281:*

«Ստինպոլայ եպիսկոպոս» Հուսիկը[2]: Շուրջ մեկ հարյուրամյակ անց, 1401թ. Մոլդովայի իշխան Ալեքսանդրու Բարին Սուչավայում հայոց առաջնորդություն հաստատելու մասին իր հրովարտակով հայտնում է, որ «Յովհաննէս հայոց եպիսկոպոսը մեզ մոտ եկավ, առ մեր մոլդովական գահը և ներկայացավ մեզ Կոստանդնուպոլսոյ ուղղափառ Անթոնիէ պատրիարքի իրաւական թղթերով, որովհետև իրենց հայ պատրիարքը դեռ չեն ունեցած»[3] (ընդգծումը մերն է – Ա.Խ.):

Ընդգծվածը պետք է հասկանալ միանշանակ, այսինքն, Կոստանդնուպոլսի հայ պատրիարքը (առաջնորդը) դեռևս չի նշանակվել կամ չի բազմել աթոռին, ուստի և Հովհաննեսն իշխանին է ներկայացել Կոստանդնուպոլսի հույն պատրիարքի հավատարմագրերով: Այս Հովհաննեսի՝ Մոլդովա անցնելուց երկու տարի անց, Կոստանդնուպոլսի առաջնորդական աթոռն էր զբաղեցնում արքեպիսկոպոս Զաքարիան, ինչպես հավաստում է հիշատակագիրը «Ի թվ. ՊՕԲ (1403)... ի հայրապետութեան Կոստանդնուպոլսոյ արհիեպիսկոպոսի տէր Զաքարիայի»[4]:

Պահպանվել է Կոստանդնուպոլսի կողմերի Հովհաննես եպիսկոպոսի պատասխանը Բասիլիայի հայրերի՝ 1433թ. հղած «Հրաւիրանաց թղթին» (ընագիրը թարգմանություն է լատիներենից). «...զի մեք, Յովհաննէս եպիսկոպոս, կարգեալ ի կաթողիկոսէ մերմէ Ամենայն հայոց ի կողմանս Կոստանդնուպոլսի. եւ Եսայի եպիսկոպոս ի նմին քաղաքի եղեալ ի հոգաբարձութիւն եկեղեցւոյ հայոց»[5]:

Քրիստոնեական եկեղեցիների միավորումը գլուխ բերելու նպատակով Եվգենիոս Դ պապը հրավեր է ուղարկում նաև հայ եկեղեցուն՝ իր ներկայացուցիչներին առաքելու այդ առթիվ գումարվելիք տիեզերական ժողովին: Կոստանդին Վահկեցի կաթողիկոսը, որ միության կողմնակիցներից էր, գրություն է ուղարկում Կաֆա (Թեոդոսիա)՝ իր տեղապահ Սարգիս վարդապետին. «Ես իմով լի և կատարեալ ճոխութեամբ, – գրում է կաթողիկոսը, – ետու իշխանութիւն Սարգսի վարդապետի, որ է եւ եղիցի փոխանակ անձին իմոյ, ընդ նմին եւ Մարկոսի եւ Թումայի վարդապետաց եւ Յովակիմայ եպիսկոպոսի զի երթիցեն ի ժողովն...»[6]:

Իր այս մտադրության մասին կաթողիկոսը տեղեկություն է տալիս նաև Կաֆայի կայսերական հյուպատոսին. «...Լիով իշխանութեամբ մերով կարգեցաք փոխանակ անձին մերոյ զորդի իմ զՍարգիս վարդապետ, եւ զԹովմաս վարդապետ եւ զՅովակիմ եպիսկոպոս Բերիայ, զի երթիցեն ի Սիւնհոդոսն յայն օրհնեալ»[7]:

Երկու նամակներն էլ գրվել և հասցեատերերին են հասել 1438թ.: Երկու դեպքերում էլ հիշվում է «Յովակիմ եպիսկոպոս Բերիայ» բառակապակցությունը, որ վեճերի տեղիք է տվել ուսումնասիրողներին: «Բերիայ» ձևը վերագրվում է կամ Հալեպին (Բերիա) և կամ էլ Կոստանդնուպոլսի հանդիպակաց ճենովական բնակավայրին՝ Բերային (Փերա): Մ.Զամչյանը օգտագործում է «Յովակիմայ

---

[3] Ս.Գ ո ղ ա ն ճ ե ա ն, Ռումանահայութեան Անին՝ Սուչավայի հայ գաղութը, Ե., 2000, էջ 25:

[4] Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմ. Լ.Ս.Խ ա չ ի կ յ ա ն), մասն Ա (1401 – 1450թթ.), Ե., 1955, էջ 41:

[5] Ա. Պալճեան, նշվ. աշխ., էջ 81:

[6] Նույն տեղում, էջ 88:

[7] Նույն տեղում, էջ 89:

եպիսկոպոսին Բերիոյ» ձևը՝ փաստորեն լուելյայն ընդունելով, որ կաթողիկոսը նկատի է ունեցել Հալեպը: Ա.Պալճյանը չի շեղվում կաթողիկոսի գործածած ձևից՝ գրելով «եպիսկոպոս Բերիայ»: Ն.Ակինյանը՝ իր վերջնական տեսակետի մեջ և Բաբգեն եպիսկոպոսը կարծում են, որ «Բերիայը» պետք է հասկանալ «Հալեպ», իսկ Ա.Ալպոյաճյանը պնդում է, որ կաթողիկոսը նկատի է ունեցել Կոստանդնուպոլսի մերձակա Բերան[8]: Ընդսմին, Ն.Ակինյանը կարծում է, որ Հովակիմին պետք է առնչել մի կողմից Հալեպի, մյուս կողմից՝ Կոստանդնուպոլսի հետ. «Յովակիմ՞ ձեռնադրուած Հալէպի թեմի վրայ, կը գործեր պաշտոնով Կ.Պոլիս»[9], - գրում է նա:

Կարծում ենք՝ Ա.Ալպոյաճյանը հիմնավոր դիտողություն է անում՝ վերականգնելով «Բերա» ձևը և մերժելով «Բերիա-Հալեպ» ընթերցումը: Ճիշտ 1438-ին, երբ Կոստանդին Վահկեցին նամակով կայանալիք եկեղեցական ժողովում իրեն փոխանորդ էր ընտրում Հովակիմ եպիսկոպոսին, հիշատակարանը վկայում է, որ Կոստանդնուպոլսի արքեպիսկոպոսը Հովակիմն է. «Գրեցաւ գիրքս ձեռնադրութեան ՊՁԷ (1438) ի վայելումն արհիեպիսկոպոսին տէր Յովակիմին Կոստանդնուպոլսի, զոր տէր Աստուած վայել տացէ յամերամս ժամանակաց, ամէն»[10]:

Բաբգեն եպիսկոպոսը այս վերջին փաստը ծառայեցնում է Բերիա-Հալեպի Հովակիմի գոյության իր տեսակետին. քանի որ 1438թ. Հովակիմ արքեպիսկոպոսը Կ.Պոլսի «առաջնորդական աթոռի վրա է, այս Յովակիմը ամենևին չի կրնար նոյնանալ Հալէպի (Բերիոյ) Յովակիմ եպիսկոպոսին հետ, որը 1438 - 1440 Վահկացի Կոստանդին Զ-րդ կաթողիկոսի... կողմէն իբրև պատգամաւոր Փլորենտինա ղրկուեցաւ»[11], - գրում է նա: Բայց Բաբգեն եպիսկոպոսը որևէ փաստարկ չի բերում այն բանի օգտին, որ 1438-ին Հալեպում առաջնորդը Հովակիմն էր, բացի «Բերիայ-Հալեպ» ոչ հիմնավոր նույնականացումից: Վերը տեսանք, որ խոսքը վերաբերում էր միայն Կոստանդնուպոլսի (Բերայի) Հովակիմին, հետևաբար, այս նույնականացումը հիմնավոր չէ:

Այժմ կանդ առնենք Հովակիմ եպիսկոպոսի պաշտոնավարության ընթացքի վրա: Ըստ Մ.Զամչյանի, նախքան Կոստանդնուպոլսի պատրիարքի պաշտոն զբաղեցնելը, Հովակիմը Պրուսայի առաջնորդն էր և որ նա, իբրև պատրիարք, աթոռակալել է 1461 - 1478թթ.[12]: Մի հիշատակարանում դարձյալ հիշվում է Հովակիմ եպիսկոպոսը, որը նորոգել է Կուտինայի եկեղեցին՝ իբրև Պրուսայի հոգևոր պետ[13]: Իսկ Քյոթահիայի «քյութուկ»-ում գրված է. «Այլ և հաստատեցաւ յիշատակարանս այս ի թվին ՊՂԴ (1445) ամին ի հայրապետութեան տեառն

---

[8] Մ.Զամչեան, նշվ. աշխ., էջ 475, Ա.Պալճեան, նշվ. աշխ., էջ 87, Ն.Ակինեան, Կոստանդնուպոլսոյ հայոց պատրիարքութեան սկզբնավորումը (Հանդէս ամսօրեայ, 1951, N 8 - 10, էջ 461), Բաբգէն եպ., Կ.Պոլսի հայ պատրիարքութեան ծագումը եւ առաջին պատրիարք Յովակիմ եպիսկոպոս (Հանդէս ամսօրեայ, 1924, N 9- 10, էջ 440), Ա.Ալպոյաճեան, Իսթանպուլի հայոց հոգևոր վարչութեան սկզբնաւորութիւնը (Շողակաթ, բացառիկ, 1962, N 2, էջ 25): Տե՛ս նաև Հ.Ճ.Սիրունի, Պոլիս և իր դերը (1453-1800), հ. 1, Բեյրութ, 1965, էջ 107 - 111:

[9] Ն.Ակինեան, նշվ. աշխ., էջ 461:

[10] Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 492:

[11] Բաբգէն եպ., նշվ. աշխ., էջ 440:

[12] Մ.Զամչեան, նշվ. աշխ., էջ 500, 113 («Ժամանակագրութիւն», հատվածը):

[13] Տե՛ս Բաբգէն եպ., նշվ. աշխ., էջ 440:

Կարապետին եւ եպիսկոպոսութեան տեառն Ովակիմայ»[14]: Ի լրումն Հովակիմների այս շարքի, Ամիրդովլաթի «Օգուտ բժշկութեան» երկի հիշատակարանում (1469) հիշվում է նաև Ֆիլիպեի (Պլովդիվ) առաջնորդ Հովակիմը. «Թարգմանեցաւ պատուական բժշկարանս... ի կաթողիկոսութեան տէր Ըռստակիսի եւ եպիսկոպոսութեան տէր Յովակիմին»[15]:

Արդյոք նույն անձինք են այս բոլոր Հովակիմները, որ կասկածի է ենթարկում Բաբգեն եպիսկոպոսը[16], թե գործ ունենք նույնանուն տարբեր անձանց հետ: Վերջինս, սակայն, ընդունում է, որ Պրուսայի առաջնորդ Հովակիմը կարող է լինել նույն ինքը՝ Կուտինայի եկեղեցին նորոգող Հովակիմը[17]: Այդպես էլ կա, որովհետև, հակառակ դեպքում Կուտինայի եկեղեցու նորոգման առթիվ Պրուսայի առաջնորդի անունը չէր հիշվի: Այստեղ ավելացնենք 1447թ. մի ճաշոցի հիշատակարանը՝ գրված «ի ժամանակս քաջ հովապետին մերոյ տէր Յովակիմայ, որ է այսաւր վերատեսուչ նահանգիս Պու(ր)սայու և Կոստանդինուպալսի և սահմանեալ վիճակիս իւրոյ»[18]: Ամրագրենք, ուրեմն, որ 1447թ. Պրուսան և Կոստանդնուպոլիսը մտել են մեկ առաջնորդության մեջ, որի մասն էր կազմում, ինչպես տեսանք, Կուտինան:

Իսկ այժմ փորձենք հանրագումարի բերել Հովակիմի (Հովակիմների) առաջնորդության վերաբերյալ բոլոր տեղեկությունները՝ իրենց աղբյուրներով (1438 - 1469):

1. 1438թ., «Յովակիմայ եպիսկոպոսի Բերիայ» (Կոստանդին Վահկեցի) :

2. 1438թ., «արհիեպիսկոպոսին տէր Յովակիմին Կոստանդնուպալսի» (Գիրք ձեռնադրութեան):

3. 1445թ., Հովակիմ, եպիսկոպոս (առաջնորդ) Կուտինայի (Քյոթահիայի «քյութուկ»):

4. 1447թ., Հովակիմ, առաջնորդ Պրուսայի և Կոստանդնուպոլսի (Ճաշոցի հիշատակարան):

5. 1461 - 1478թթ., Հովակիմ, Կոստանդնուպոլսի հայերի առաջին պատրիարք (Մ.Զամչյան)[19]:

---

[14] Ա. Ալպոյաճեան, Յուշամատեան կուտինահայերու, Բեյրութ, 1961, էջ 186:

[15] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ (1451 - 1480) (կազմ. Լ. Ս. Խաչիկյան), Ե., 1958, էջ 286:

[16] Բաբգէն եպ., նշվ. աշխ., էջ 440:

[17] Նույն տեղում:

[18] ԺԵ դարի ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ (1482 - 1500) (կազմ. Լ. Ս. Խաչիկյան), Ե., 1967, էջ 409 - 410: Հիշատակարանը գրել է Աբրահամ Անկյուրացու «Ողբում» հիշվող Աստվածատուր Սաթրլմիշի (որին ուրիշ երեք հայերի հետ միասին Մեհմեդը Անկյուրիայից գաղթեցրել էր Կ.Պոլիս) որդին: Վերջինս ձեռագիրը գնել էր Պրուսայում և նվիրել Անկյուրիայի Ս. Բառասունք եկեղեցուն (նույն տեղում, էջ 409): Նա չի գրացել իր հիշատակարանում տալ Հովակիմի, իբրև «իմաստուն և հանճարեղ քննող և պատմող Հին և Նոր կտակարանացն ամենայն Աստուածաշունչ սուրբ գրոց» անձի բնութագիրը (նույն տեղում, էջ 410):

[19] Մ.Զամչյանի աղբյուր կարող էր լինել Մ. դպիր Ճեվահիրճյանը, որը 1713թ. կազմել է Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքների գավազանագիրքը [(Հ. Պէրպէրեան, Կ.Պոլսոյ հայ պատրիարքներու գաւազանագիրքը ըստ Մաղաքիա դպիր Ճէվահիրճեանի (Հանդէս ամսօրեայ, 1963, N 7 - 9, էջ 325 - 340)]: Գավազանագիրքը ունի մի քանի տարբերակներ. իր՝ Հ. Պերպերյանի հրատարակած տարբերակում ևս Հովակիմի պաշտոնավարությունը, իբրև պատրիարք, սկսվում է 1461՝ Հայոց ՉԺ թվականից: Հավանաբար, Ճեվահիրճյանի մեկ այլ

6. 1469թ., Հովակիմ, եպիսկոպոս Ֆիլիպեի (Ամիրդովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան):

Ընդունելի է, կարծում ենք, այն տեսակետը, որ միևնույն անձն են 1438թ. հիշատակված «Բերիայ» և Կոստանդնուպոլսի Հովակիմները: Նկատենք, որ համոզիչ չի թվում Ն.Ակինյանի «հաշտարարական»մոտեցումը, թե, իբր, Հովակիմի անվանը կցվել է իր ձեռնադրության վայրի անունը (Բերիայ-Հալեպ), իսկ ինքը առաջնորդի պաշտոն է վարել Կոստանդնուպոլսում, որին և իրավացիորեն առարկում է Ա.Ալպոյաճյանը՝ նկատելով, որ «Բերիայ» անվան տակ պետք է հասկանալ Կոստանդնուպոլսին կից Բերան[20]: Այս առթիվ մեկ անգամ ևս կրկնենք, որ Կոստանդին Վահկեցի կաթողիկոսը իր նամակում նկատի է ունեցել Բերա-Կոստանդնուպոլսի առաջնորդ արքեպիսկոպոս Հովակիմին:

Միևնույն անձն են 1445թ. Կուտինայի առաջնորդը և 1447թ. Պրուսայի և Կոստանդնուպոլսի առաջնորդը. եթե 1445թ. Կուտինայի եկեղեցին նորոգողը Պրուսայի Հովակիմ առաջնորդն էր, ապա 1447թ. Պրուսայի և Կոստանդնուպոլսի Հովակիմ առաջնորդը ևս նույն անձն է՝ Հովակիմը: (Այստեղ արդեն չկա Բերիա-Հալեպ-Կոստանդնուպոլիս տարածական հեռավորության գայթակղությունը, որ մղում էր երևութական Հովակիմ ստեղծելու Հալեպում): Պրուսան այստեղ հանդես է գալիս որպես կապող օղակ, ճիշտ այնպես, ինչպես 1461-ից Հովակիմի՝ Կոստանդնուպոլսի հայերի հոգևոր գլուխ լինելու դեպքում. ըստ Մ.Զամչյանի և Մ. Ճեվահիրճյանի, Հովակիմը Կոստանդնուպոլիս է եկել Պրուսայից, որտեղ վարում էր առաջնորդի պաշտոնը: Ասենք միայն, որ 1438 – 1447-ից սկսած Հովակիմն անխափան չի վարել Կոստանդնուպոլսի և Պրուսայի առաջնորդությունը: 1449թ. Պրուսայում հիշվում է մի այլ եպիսկոպոս, որի առաջնորդ լինելը չի բացառվում. «Գրեցաւ գիրք ձեռնադրութեան ի քաղաքին Պուրսա կոչեցեալ, ի թվ Հայոց ՊՂ (1449) ի մարտի ԺԹ (19) ի խնդրոյ... առաքելաշնորհ եպիսկոպոսին տէր Մելքիսէթի»[21]:

1459թ. Կոստանդնուպոլսում ևս առաջնորդը Մարտիրոսն էր, ինչը պարզվում է Ամիրդովլաթի «Ուսումն բժշկութեան» գրքի հիշատակարանից՝ գրված «ի քաղաքն Կոստընդինոյպալի եւ ի յառ ոտն վանիցն սուրբ Ստեփանոսու եւ ի հայրապետութեանն տէր Մարտիրոսին Կոստանտինոյպալու վիճակին»[22]: Հետևաբար, Հովակիմն անընդմեջ չի վարել իր պաշտոնները, այլ ընդհատումներով: 1438 – 1447թթ. ընթացքում Կոստանդնուպոլսի, ապա 1445 - 1447թթ. առաջնորդ Պրուսայի և Կոստանդնուպոլսի (նաև Քյոթահիայի), այնուհետև, 1460-ին կամ առնվազն 1461-ին Պրուսայի, այնուհետև, նույն թվականից Կոստանդնուպոլսի առաջնորդ, այսպիսին է այս, իրոք նշանավոր հոգևորականի պաշտոնավարության ընթացքը առ այսօր հայտնի տվյալներով:

Վերադառնանք Ֆիլիպեի եպիսկոպոս (առաջնորդ) Հովակիմին: Սոսկ

տարբերակը նկատի ունի Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախի ականավոր պատմաբան Գ.Բամպուքճյանը, երբ գրում է, թե Հովակիմը, ըստ Մաղաքիա Ճեվահիրճյանի, պատրիարք է նշանակվել 1464 թվականին (K.Pamukciyan, Jstanbul yazilari Cilt I, Jstanbul, 2002, s. 4): Գ.Բամպուքճյանի այս արժեքավոր գիրքը մեզ է տրամադրել հարգարժան պրոֆ. Պ.Մուրադյանը, որին հայտնում ենք մեր շնորհակալությունը:

[20] Ա.Ալպոյաճեան, Իսթանպուլի հայոց հոգեւոր վարչութեան սկզբնավորութիւնը (Շողակաթ, 1962, էջ 25):

[21] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի դիշատակարաններ, մասն Գ, էջ 411 - 412:

[22] Նույն տեղում, մասն Բ, էջ 115:

արտաքուստ է կնճռոտ հարց ներկայացնում Ֆիլիպեի եպիսկոպոսի և Կոստանդնուպոլսի առաջնորդի նույնանունության հանգամանքը: Ավելի ընդարձակ մեջբերենք վերոհիշյալ հիշատակարանը. «Թարգմանեցաւ պատուական բժշկարանն ի մայրաքաղաքն ի Ըռումիայ որ Թարքմանի Ֆիլիպիայ ի Թվականիս Հայոց ՉԺԸ (1469) ամին, ի դեկտեմբերի ԻԵ որ ծնունդ էր Փրկչին այլազգաց հաշուովն, ի կաթողիկոսութեան տէր Ըռստակիսի և եպիսկոպոսութեան տէր Յովակիմին»[23]:

Ճիշտ այնպես, ինչպես Հովակիմը միավորում էր Կոստանդնուպոլսի և Պրուսայի թեմերը, այնպես էլ, 1469թ. նա կարող էր հանդես գալ իբրև Կոստանդնուպոլսի և Ֆիլիպեի առաջնորդ: Հիրավի, Ֆիլիպեի հայերը գոնե 1460-ականի վերջին իրենց տեղական գործող առաջնորդը չեն ունեցել: Հ.Պերպերյանը նկատում է, որ Հովակիմից առաջ (այսինքն, մինչև 1461թ.) Ռումելիի հայերը պետք է կախում.ունենային Կոստանդնուպոլսի եպիսկոպոսից, որովհետև չունեին իրենց եպիսկոպոսը: Նա վկայակոչում.է նաև 1307թ. Սսի եկեղեցական ժողովը, որին մասնակցել է միայն Ստինպոլի (այսինքն, Կոստանդնուպոլսի, Ստամբուլի) եպիսկոպոս Հուսիկը: Ընդսմին, Հ.Պերպերյանը հենվում է Մ.Զամչյանի աղբյուրի վրա, ըստ որի, Ցաթիհը Հովակիմին էր տվել Հունաստանի և Անատոլիայի հայերի վրա հոգևոր իշխանությունը՝ իրավամբ վերապահում անելով, որ «Անատոլիա» տեղանվան ներքո կարող էր ենթադրվել թուրքերի տիրապետության տակ գտնվող փոքրասիական մի սահմանափակ շրջանը»[24]: Խնդրին այս կերպ նայելիս հասկանալի է դառնում, որ Հովակիմը 1469թ., իրոք, կարող էր լինել Կոստանդնուպոլսի և Ֆիլիպեի հոգևոր գլուխը: Ա.Ալպոյաճյանը, իր հերթին, Ֆիլիպեի առաջնորդին նույնացնում.է Կոստանդնուպոլսի առաջնորդ Հովակիմի հետ[25]:

Բաբգեն եպիսկոպոսը կարծում է, թե առհասարակ «այսպիսի իրարու շարայարեալ պաշտօնաւարութիւն մը չի կրնար բոլորովին հաւաստի ըլլայ»[26]: Կարծում.ենք, ընդհակառակն, ոչ հավաստին Հովակիմների թվացյալ առատությունն է, որ ընկալելի չափերի կարող է հասնել հանգամանքների այն հերթագայությամբ, որ փորձեցինք վերարտադրել վերը:

Այժմ Կոստանդնուպոլսի հայ հոգևոր գլուխների պատրիարքական տիտղոսի վերաբերյալ, որ բավական չարչրկված հարց է դարձել գաղթօջախի պատմությանը նվիրված ուսումնասիրությունների մեջ: Անտարակույս, Կոստանդնուպոլսում վերաբնակեցնելով հույների, ինչպես և այլ ուղղափառների (սերբեր, բուլղարացիներ), հայերի և հրեաների, Մեհմեդը և նրա հաջորդները փաստորեն մայրաքաղաքը դարձնում էին տարադավան հանրությունների ընդհանուր բնակավայր, որից հետո անխուսափելիորեն առաջ էր գալու տարբեր կրոնների պատկանող համայնքների կարգավիճակի խնդիրը: Բայց այս խնդիրը սոսկ մայրաքաղաքին չէր վերաբերում, այլ կայսրության ամբողջ տարածքին: Այսպես էր նախապատրաստվելու Օսմանյան կայսրության մեջ միլեթների

---

[23] Նույն տեղում, մասն Ա, էջ 409 - 410:

[24] Հ.Պէրպէրեան, Կ.Պոլսոյ հայ պատրիարքութեան հիմնարկութիւնը (Հանդէս ամսօրեայ, 1964, N 7 - 9, էջ 343):

[25] Ա.Ալպոյաճեան, Իսթանպուլի հայոց հոգեւոր վարչութեան սկզբնաւորութիւնը (Շողակաթ, 1962, էջ 29):

[26] Բաբգէն եպ., նշվ. աշխ., էջ 440:

համակարգի ձևավորումը XV – XVI դդ.: Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախի պատմության համար այս իմաստով երկու հարց է ծառանում. արդյո՞ք Կոստանդնուպոլսի հայ հոգևոր պետի իշխանությունը տարածվում էր ամբողջ կայսրության տարածքում բնակվող հայության վրա կամ արդյո՞ք նրա հոգևոր իրավասության ներքո էին գտնվում կայսրության տարածքի մեջ մտնող հայկական մյուս թեմերը: Սրան անմիջապես առնչվում է երկրորդ հարցը՝ Կոստանդնուպոլսի հայ համայնքի հոգևոր գլխին XV դ. արդյո՞ք տրվել է «պատրիարք» տիտղոսը (որ անվերապահորեն հայտնում է Մ.Զամչյանը), որ նրան ոչ միայն կառանձնացներ կայսրության մեջ մտնող մյուս վիճակների կամ թեմերի առաջնորդներից, այլև կնշանակեր, որ այս վերջինները կամ դրանց մի մասը ենթարկվել են նրա գերակայությանը:

Մ.Զամչյանի անվերապահ պնդումը, սակայն, քննադատության չի դիմանում և իրավացիորեն հերքվել է, մասնավորապես, պոլսահայ գաղթօջախի վաստակաշատ հետազոտող Հ.Պերպերյանի կողմից[27]: Հիրավի, XVդ. ձեռագիր հիշատակարաններում կամ այլ վավերագրերում Կոստանդնուպոլսի հայերի հոգևոր գլխին գրեթե առանց բացառության, պատրիարք տիտղոս չի վերապահվում: Այդ սկզբնաղբյուրներում նրա պաշտոնը հիշվում է «հայրայպետ», «հայրապետ», «եպիսկոպոս», և «արհիեպիսկոպոս» հորջորջումներով[28]: Բացառություն է կազմում 1480թ. գրված մի սաղմոսի հիշատակարանը: Գրիչ Մարտիրոսը այստեղ նշում է, որ վարդապետներ Մատթեոս Սեբաստացուն և Աբրահամ Տրապիզոնեցուն սուլթանը բերել էր «վասն պատրիարգութեան համար և սոքա ոչ առին յանձն լաւ համարելով զմիայնակեցութիւն, քան թէ փառք առնուլ մարդկանէ»[29]:

Հ.Պերպերյանը, սակայն, հավաստի չի համարում գրիչ Մարտիրոսի տեղեկությունը՝ նկատելով, որ նա, լավատեղյակ չլինելով նույնիսկ հայերենի ուղղագրությանը, կարող էր սխալվել՝ հույների նմանակությամբ հայերին «պատրիարքություն» և նրանց հոգևոր գլխին «պատրիարք» պատվանուն վերագրելով[30]: Դիմենք հանրահայտ իրողություններին.

Հիրավի, «պատրիարք» պատվանունը XV դ., Կոստանդնուպոլսի գրավումից առաջ և հետո ազգային եկեղեցու նվիրապետության մեջ ամրագրվում էր ամենից առաջ կաթողիկոսներին: 1436թ. Համիթի եպիսկոպոս Մկրտիչ Նաղաշը Կոստանդին Վահկեցի կաթողիկոսին մեծարում էր այդ պատվանունով՝ «Հրամանաւ տեառն իմոյ Կոստընդին պատրիարգի»[31]: Արծկեում 1460թ. գրված մի ձեռագրի հիշատակարանում հիշվում է Զաքարիայի՝ «ընդհանուր Հայոց կաթողիկոսի և պատրիարգ Վաղարշապատու Էջմիածնի» անունը[32]: Կիլիկիայի կաթողիկոսը մեծարվում է նույն տիտղոսով՝ 1469թ. մի ձեռագրում. «Զոր նախնեաց հետեւող գտեալ մեծ պատրիարք տէր Կարապետ» դարձվածում[33] և այլն:

---

[27] Հ. Պ է ր պ է ր ե ա ն, Կ.Պոլսի հայ պատրիարքութեան հիմնարկութիւնը (Հանդէս ամսօրեայ, 1964, N 7 – 9, էջ 337 – 350, N 10 – 12, էջ 497 – 510):

[28] Նույն տեղում, էջ 501, տե՛ս նաև ժե դարի հիշատակարաններ, մասն Բ, էջ 115, 357, 286:

[29] ԺԵ դարի հիշատակարաններ, մասն Բ, էջ 441:

[30] Հ. Պ է ր պ է ր ե ա ն, նշվ. աշխ., էջ 501:

[31] ԺԵ դարի հիշատակարաններ, մասն Ա, էջ 464:

[32] Նույն տեղում, մասն Բ, էջ 135:

[33] Նույն տեղում, էջ 284:

Ուշագրավ է, որ Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի հայ հոգևոր գլուխների «պատրիարք» պատվանունի դեմ կտրուկ առարկություններ անող Սիմեոն Երևանցին իր «Ջամբռում» հայ եկեղեցու նվիրապետության մեջ պատրիարքներ է ճանաչում չորս համբավավոր վանքերի վանահայրերի, իբրև «նախապատիւ և գերհարգելի»՝ Էջմիածնի կաթողիկոսից հետո. այդպիսիք են, ըստ նրա թվարկման, Թադեոս առաքյալի (Արտազ), Ստեփեի (Սյունիք), Ս. Աստվածածնի (Բջնի) և Ս. Նշան (Հաղպատ) վանքերի վանահայրերը, որոնք Էջմիածնի կաթողիկոսի տեղապահներն ու աթոռակալներն են և օծման ժամանակ ձեռքը դնում են կաթողիկոսի գլխին[34]:

Այն, որ հայերեն հայրապետ պատվանունը բառացիորեն պատճենված է հունարեն պատրիարք բառից (պատրի-հայր, արքիս-պետ) գայթակղիչ է՝ տեղիք տալով կարծելու, որ հիշատակարանների հեղինակները XV դ. հայրապետ ասելով նկատի են ունեցել հենց պատրիարք տիտղոսը: Ն.Ակինյանը, թեև զգուշորեն, մի պահ տրվում է այդ գայթակղությանը. նկատի առնելով Ամիրդովլաթի «Օգուտ բժշկութեան» հիշատակարանը (1459թ., «ի հայրապետութեան տէր Մարտիրոսին Կոստանդինոյպալիս վիճակին»)[35], նա գրում է. «Ցիշատակարանին» ի հայրապետութեան» ասութիւնը կը թուի ինձ, թէ իմանալու է հայրապետ-պատրիարք-փաթրիկ»[36]:

Այս կարծիքին չի կարելի հանձայնել՝ տերմինի գործածության իմաստով: Իր՝ Մ.Ջամչյանի տեղեկությունը Ցաթիհի կողմից Հովակիմին պատրիարք տիտղոս շնորհելու մասին, որևէ փաստով չի ամրագրվում և հիմնավորապես հերքվել է Հ.Պերպերյանի կողմից: Վերջինս ցույց է տալիս, որ ժամանակի ոչ հայկական, ոչ էլ որևէ օտար աղբյուր չի հիշում Հովակիմի՝ Պրուսայից փոխադրվելը կամ նրա պատրիարք տիտղոս ունենալը[37]: Նա այդ տիտղոսի ամենավաղ գործածության ժամանակը ճշտում է հետևյալ կերպ. 1526թ. Սուլու մանաստրի եպիսկոպոս Գրիգորը (Մ.Ջամչյանի պատրիարքների ցանկում՝ 5-րդը. 1526 – 1537թթ.), սուլթանական ֆերմանում հիշվում է ոչ թե պատրիարք, այլ մարեաստ (կրոնական պետ) պատվանունով: Առաջինը իրեն պատրիարք է անվանել Աստվածատուր վարդապետը (1537– 1550)՝ 1543թ. մի ձեռագրում, որ վկայակոչում է Հ.Պերպերյանը. «Գրեցաւ սակաւ գիրս ձեռամբ Աստուածատուր պատրիարգին ի թվին ՋՂԲ (1543), ապրիլ ԻԱ (21)»: Հենվելով այս հիշատակարանի վրա, Հ.Պերպերյանը եզրակացնում է, որ պատրիարք պատվանունը սկսել է գործածվել Սուլեյման Կանունիի օրոք (1520 – 1566), 1526-ի և 1543-ի միջև[38]:

Հ.Պերպերյանի նշած՝ 1543-ը պետք է 3 տարով ևս հետ տանել: Նույն Աստվածատուր պատրիարքի ժամանակ, 1540թ. մի Ավետարանի հիշատակարանը

---

[34] Սիմէոն Երևանցի, Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 55:

[35] Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, էջ 115:

[36] Ն. Ակինեան, Կոստանդնուպոլսոյ հայոց պատրիարքութեան սկզբնաւորումը (Հանդէս ամսօրեայ, 1951, N 8 – 10, էջ 462):

[37] Հ. Պէրպէրեան, Կ.Պոլսոյ հայոց պատրիարքութեան հիմնարկութիւնը (Հանդէս ամսօրեայ, 1964, N 7 – 9, էջ 341):

[38] Նույն տեղում, էջ 347 – 378: Աստվածատուրի այս տիտղոսը նույն 1543թ. մի վավերագրում նշվում է խոջա Խտրրի կողմից. «Եւ գնեաց զգիրքս ի Ըստամբաւլ քաղաքի, ի Աստուածատուր պատրիարգէն, ի Ժ ֆլորի» [Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց (կազմ. Ն. եպ. Պողարեան), Երուսաղէմ, 1971, Հ. Ե, էջ 434]:

գրվել է «Ի թվ ՋՂԹ (1540) ի թագաւորութեան սուլտան Սուլայմանին և ի պատրիարգութեան տէր Աստուածատուր վարդապետին»[39]: Հետևաբար, պատրիարք տիտղոսի գործածության սկիզբը պետք է որոնել 1526-ի և 1540-ի միջև:

Կոստանդնուպոլսի հայ առաջնորդների՝ պատրիարք պատվանվան ավելի ուշ շրջանում (Ցամիհից հետո) գործածվելու իրողությունն ամրապնդվում է Սիմեոն Երևանցու դիտողություններով: «Ջամբռ»-ում ակներև է Սիմեոնի դառնությունը Էջմիածնի իրավունքները սահմանափակած կամ յուրացրած՝ Կոստանդնուպոլսի պատրիարքների նկատմամբ: Ակայն, անկախ դրանից, նա բավական ճշմարտացի է նկարագրում պատրիարք տիտղոսի գործածության հանդամանքները և դրա հետ կապված՝ պատրիարքարանի հետզհետե ծավալվող իրավասությունները Օսմանյան Թուրքիայի ողջ տարածքում: «Թէպէտ ի յետին ժամանակս, - գրում է նա, - ոմանք փառասէրք ախտամոլ սևագլուխք յանգլխութենէ ազգիս՝ զժամ գտանելով՝ զինքեանս պատրիարգս անուանեցին և զհրաւիրակս իւրեանց նուիրակունս, զորս և գոհհիկ հասարակութիւնն ազգիս մերոյ անընտրողաբար սովորութիւն արարեալ կոչեցին և կոչէն: Այդպէս է և ի Կոստանդնուպոլիս, որ ոչ է երկիր և քաղաք Հայոց, այլ յունաց, յորում նստիւր յունաց պատրիարգն որպես և արդեն իսկ նստի»[40]:

Քիչ անց Սիմեոնը գրում է, որ առաջնորդ նշանակվելով կաթողիկոսի հրամանով, այնուհետև Կոստանդնուպոլսի հայ հոգևոր դլուխները հետզհետե անկախ դիրք են գրավել նրա նկատմամբ՝ օսմանյան կայսրության զորանալու, ասել կուզի՝ տարածական ծավալման համեմատ: «Յետ այնորիկ ի զօրանալ թագաւորութեանն օսմանցւոց, և ի յաճախել իշխանացն և ժողովրդոց մերոց անդ, սկսան ընդվզել և ամբարտաւանիլ յանդր նստող առաջնորդքն և թողու զհոգևորն կանոն և առ յոտն արկանել զպատիւն Հայրապետին, հրամանագրով այլազգի թագաւորին նստել ինքնագլուխ՝ կանոնելով և զհարկս տալ յարքունիս յամէ յամ, յորոց և փաթրիկ անուանել: Ուստի և ի հասարակութենէ գոհկաց սովորութիւն եղեւ պատրիարգ կոչիլ»[41]:

Վերոհիշյալ մտքերի մեջ արժեքավոր է այն, որ Կոստանդնուպոլսի հայ առաջնորդները օսմանյան տիրապետության պայմաններում ոչ թե միանգամից, այլ ժամանակի ընթացքում են ձեռք բերել պատրիարքի տիտղոսը: Դրա հետ կապված, կոչվելով «պատրիարք», նրանք ամենամյա հարկ (պետական հարկը՝ միրի) են տվել արքունիքին և, փաստորեն, այս տիտղոսի վավերացումը սուլթանների կողմից, վավերացումն էր նաև պատրիարքի՝ կաթողիկոսից անկախանալուն: Այստեղ ուշագրավ է նաև Կոստանդնուպոլսի առաջնորդների՝ օսմանյան հարկային համակարգի մեջ աստիճանաբար ձեռք բերած գործառութային գերի ընդգծումը, որ, ի վերջո, պետք է հասցներ նրանց իրավունքների և պարտականությունների աննախընթաց աճին՝ կայսրության մեջ

---

[39] Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. Բ, Երուսաղէմ, 1967, էջ 22: Ուշագրավ է, որ թուրքական որևէ ժամանակագիր, այդ թվում և Աշըքփաշազադեն, չի հիշում պատրիարքներին, ընդամին, ոչ միայն հայ, այլև հույն (տե՛ս Braude B. Foundation Myths of the Millet System. In: Christians and Jews in the Ottoman Empire vol. 1, N.-Y.-London, 1982, p. 75).

[40] Սիմէոն Երևանցի, նշվ. աշխ., էջ 56:

[41] Նույն տեղում:

և համապատասխանաբար, դրանց թուլացմանը Էջմիածնի կաթողիկոսի հետ ունեցած հարաբերություններում: Այս գործընթացը ունեցել է շարունակական բնույթ, և չի կարելի այն սահմանափակել մի կարճ և որոշակի ժամանակահատվածով. բոլոր դեպքերում, այդպիսին սահմանելուց առաջ պետք է ասել, որ նշված՝ Էջմիածնի կաթողիկոսությունից անկախությունը առավել քան վերաբերում էր պատրիարքի կարգավիճակի անկախությանը (դարձյալ ոչ բացարձակ իմաստով) և նյութական անկախությանը (կաթողիկոսի առջև նյութապես պատասխանատու էին միայն Կոստանդնուպոլսից եկած նվիրակները և ոչ թե պատրիարքը): Մնում էր, սակայն, բարոյական, ավանդույթի ուժով պատրիարքի պատասխանատվությունը կաթողիկոսի առջև, որ, ի դեպ, արդեն XVII դ. բազմաթիվ ճեղքեր պետք է տար՝ օսմանյան մայրաքաղաքում կաթողիկոսի հեղինակությունը վերածելով ընդամենը հոգևոր-բարոյական հասկացության: XVIդ. այսպես կոչված պատրիարքական կռիվների ամբողջ պատկերը, սկսած 1650-ական թթ., երբ պատրիարքի աթոռին հայտնվում էին ամենևին էլ ոչ Էջմիածնի համակրանքը վայելող մարդիկ, իսկ դրանից մեկ տասնամյակ էլ առաջ՝ նաև աշխարհական աթոռակալներ, վկայում է, որ Կոստանդնուպոլսի պատրիարքությունը ընթանում էր սեփական, թող որ շեղումներով հատկանշվող ճանապարհով: Եվ հենց այդ ճանապարհին էլ պատրիարքությունը ոչ քիչ դեպքերում երկրորդական տեղ էր թողնում ազգային եկեղեցու մեջ հոգևոր գերակայության վերաբերյալ ավանդական պատկերացումներին: Այս ամենի համար դանդաղորեն, բայց և հաստատուն, Կոստանդնուպոլսի պատրիարքները, փաստորեն այդ քաղաքի հայերի առաջնորդները, Ֆաթիհի ժամանակ և դեռ դրանից երկար ժամանակ հետո էլ, ձեռք էին բերում նաև իրական իշխանություն Օսմանյան Թուրքիայի մյուս տարածքներում գտնվող հայկական թեմերի նկատմամբ: Այլ կերպ ասած, պատրիարք հասկացության այն կողմը, որ վերաբերում էր ենթարկյալ վիճակներ կամ թեմեր ունենալուն, Կոստանդնուպոլսի պատրիարքության համար տակավ առ տակավ լցվում էր իրական բովանդակությամբ: Այսինքն, այն, ինչին դեռ չէին հասել կամ նվազագույն չափերով էին հասել պատրիարքները՝ XV - XVII դարերում: Այս տեսակետից ոչ համոզիչ են թվում Ա.Ալպոյաճյանի այն պնդումները, թե նախքան պատրիարքության հաստատումը (նկատի ունի 1461 թվականը) արդեն կազմակերպված համայնքներ լինելով, Մեհմեդի ֆերմանով պատրիարքությանն են կցվել հետևյալ թեմերը. Ա.Սվազ, Ս. Նշանի վանք կենտրոնով, Բ.Էնկյուրի, Ս. Աստվածածնի վանք, Գ. Պրուսա-Քյոթահիա, Կարաման[42]: Ա.Ալպոյաճյանը նաև

[42] Թուրքիոյ հայոց պատրիարքութիւն, Ընդարձակ օրացոյց ս.Փրկչեան հիւանդանոցի հայոց, Կ.Պոլիս, 1908, էջ 291: Հ.Պերպերյանը, առարկելով Ա.Ալպոյաճյանին, նկատում է, թե հիշյալ թեմերը պատրիարքությանը կցվելու մասին որևէ ֆերման գոյություն չունի, դրա վերաբերյալ չկան տվյալներ, ուստի Ա.Ալպոյաճյանի կարծիքը մնում է «երևակայական պատմագրության գեղեցիկ օրինակ» [Հ. Պ ե ր պ ե ր յ ա ն, նշվ. աշխ. (Հանդէս ամսօրեայ, 1964, N 7-9, էջ 343-344)]: Ա.Ալպոյաճյանի տեսակետին համոզիչ փաստարկներով հակադրվում է նաև Գ.Բարդակչյանը, որը նույնպես որևէ փաստ չի գտնում, որ վկայեր նշված թեմերը պատրիարքության մեջ մտնելու մասին: Նա կարծում է, որ պատրիարքը զուտ Կոստանդնուպոլսի «ալթը ջեմաաթի»՝ վեց թաղերի առաջնորդն էր մինչև 1612 թվականը, երբ նրա հոգևոր իշխանությունը սկսեց տարածվել մայրաքաղաքի սահմաններից դուրս (տե՛ս K. B. Bardakjyian, The Rise of the Armenian Patriarchate of Constantinople. In: Christians and Jews in the Ottoman Empire. vol. 1, N.Y. - London, 1982, p. 91-93).

կարծում է, թե Կոստանդնուպոլսի պատրիարքությանն են միացվել, նույն կերպ, Տրապիզոնի (1461) և Ղրիմի (1475) առաջնորդությունները[43], որ նույնպես չի ամրապնդվում փաստերով:

Սըվազը (Սեբաստիա) իր թեմերով առնվազն XVI դ. վերջերին և XVIդ. սկզբներին պետք է պատկանելիս լիներ Սսի կաթողիկոսությանը: Այսպես, 1589թ. վախճանված՝ Սեբաստիայի առաջնորդ Մինաս եպիսկոպոսի մասին ժամանակագիրը գրում է, թե «յաւուրս սորայ Զուղայեցի Զաքարիայ կաթողիկոսն Սսոյ արար ժողով ի Բերիայ», որին մասնակցել է նաև Մինաս եպիսկոպոսը, ակներևաբար, իբրև Աին ենթարկյալ առաջնորդ[44]:

Հիրավի, բացառվում է, որ Էնկյուրին Մեհմեդի ժամանակ մտած լինի Կոստանդնուպոլսի պատրիարքության մեջ. 1464թ. մի ձեռագրում, որ վկայակոչում է Գ.Բարդակչյանը, ցույց է տրվում, որ Էնկյուրիի հայերն ունեն իրենց հեղինակավոր եպիսկոպոսը՝ Ներսեսը, որը, մտահոգված Մեհմեդի իրականացրած մանկաժողովով, դիմում է ինքնուրույն գործողությունների և որտեղ Կոստանդնուպոլսի «հայրապետը» բնավ չի հիշվում[45]:

Կարծում ենք, որ Պրուսան և Քյոթահիան Կոստանդնուպոլսի հետ կարող էին նշված ժամանակաշրջանում կազմել մեկ առաջնորդություն, ինչպես գրում է Ա.Ալպոյաճյանը: Վերոբերյալ՝ 1447թ. հիշատակարանում արդեն տեսանք, որ Հովակիմը հանդես է գալիս իբրև «վերատեսուչ նահանգիս Պու(ր)սայու և Կոստանդնուպոլսի և սահմանեալ վիճակիս իւրոյ»: Կնշանակի, գոնե 1447թ. Կոստանդնուպոլիսը և Պրուսան կազմել են մեկ առաջնորդություն, ինչը, կարծում ենք, կարելի է տարածել նաև Քյոթահիայի վրա, դարձյալ Հովակիմի՝ Կուտինայի եկեղեցին նորոգելու առնչությամբ: Ինչ վերաբերում է Կարամանին, Տրապիզոնին և Ղրիմին, ապա այդ տարածքներից Մեհմեդի ժամանակ Կոստանդնուպոլիս քշված գաղթականության փաստը դեռևս որևէ հիմք չի տալիս կարծելու, որ այդ տարածքների հայերի վրա պետք է հաստատվեր Կոստանդնուպոլսի առաջնորդի հոգևոր իշխանությունը:

1469թ. Կոստանդնուպոլսի առաջնորդության մեջ կարող էր մտած լինել Ֆիլիպեն, որտեղ, ինչպես տեսանք, Հովակիմ անվամբ առաջնորդ կամ եպիսկոպոս փնտրելու հարկ չկա, որովհետև խոսքը վերաբերում է Կոստանդնուպոլսի և միանգամայն Ֆիլիպեի առաջնորդ Հովակիմին: Ամիրդովլաթի «Օգուտ բժշկութեանը» թարգմանվել է 1469թ.՝ Ֆիլիպեում, ուստի և հիշատակագիրը նկատի ունի Կոստանդնուպոլսի եպիսկոպոս Հովակիմին, իբրև Ֆիլիպեի հայերի առաջնորդի: Ինչ վերաբերում է XV դ. և հետագայում օսմանյան գրավված մյուս տարածքների հայության՝ Կոստանդնուպոլսի առաջնորդության հովվությանը պատկանելու տեսակետին, որ զարգացնում է Ա.Ալպոյաճյանը, այդ ևս չի

---

[43] Ընդարձակ օրացոյց, էջ 291:

[44] Դիւան հայոց պատմութեան, գիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ 397:

[45] K.B.Bardakyian, նշվ. աշխ., էջ 91: Այս հեղինակը նկատում է նաև, որ 1441թ. Էնկյուրիի հայերը ճանաչում էին Սսի կաթողիկոսության իշխանությունը (նույն տեղում): XVIդ. արդեն Էնկյուրին պետք է որ մտած լինի Կոստանդնուպոլսին ենթակա վիճակների մեջ. 1642թ. մի ձեռագրում այն հիշվում է իբրև առաջնորդություն՝ Կոստանդնուպոլսի պատրիարքի նախադաս հիշատակումից հետո, «ի պատրիարգութեան Կոստանդինուպօլսոյ<ի> Կիրակոս վարդապետին և առաջնորդութեան յայսմ նահանգոյս Գաղատիոյ... Գաբրիէլ վարդապետին» [Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1641 - 1660թթ.), հ. Դ (կազմ. Վ.Հակոբյան), Ե., 1984, էջ 51]:

հաստատվում, որևէ վավերագրով[46]: Կոստանդնուպոլսի առաջնորդության՝ նորանոր վիճակներ ձեռք բերելը օսմանյան նվաճումների ծավալման համեմատ, այսպիսի կարծիքը առաջինը հայտնել է Մ.Օրմանյանը, որին իրավացիորեն առարկում է Բաբգեն եպիսկոպոսը, այն համարելով «գեղեցիկ ենթադրություն»[47]: Օսմանյան նվաճումների գործոնը շոշափելի դարձավ հետագայում՝ XVIIդ. վերջերին և XVIIIդ. ընթացքում, իսկ մինչ այդ, կարծում ենք, հայ կրոնական կենտրոնների փոխհարաբերությունները ավելի շուտ կապված էին այլ գործոնների հետ, ինչպես հայ եկեղեցու և նրա վիճակների ու թեմերի ավանդութային կայունությունը կամ անկայունությունը, Թուրքիայի ու Պարսկաստանի ռազմաքաղաքական փոխհարաբերություններն ու կոնֆլիկտները: Չպետք է անտեսել նաև հայ աշխարհիկ ու կղերական վերնախավի, առանձին անհատների կամ գործիչների կողմնորոշումները, կեցվածքն ու վերաբերմունքը կրոնական կենտրոնների նկատմամբ՝ վերոհիշյալ հարափոփոխ պայմաններում: Հետևաբար, Կոստանդնուպոլսի պատրիարքության ձևավորումը, նրա վիճակների ու թեմերի կայացումը ոչ միանշանակ ու բարդ գործընթաց էր, որ պետք է հաստատուն կերպարանք ստանար մի տևական ժամանակաշրջանի ընթացքում:

Կոստանդնուպոլսի պատրիարքությունը որակական փոփոխություններ պետք է ապրեր XVIIդ. առաջին տասնամյակներին, երբ ջալալիների ապստամբության, սովի և Թուրք-պարսկական ռազմական բախումների հետևանքով օսմանյան կայսրությունում տեղի ունեցան ժողովրդագրական զգալի տեղաշարժեր: Առանձնապես լայն էր հայ բնակչության գաղթի աշխարհագրությունը, որն ընդգրկում էր ոչ միայն Թուրքիայի խոշոր քաղաքները՝ Կոստանդնուպոլիս, Իզմիր, ծովափնյա այլ քաղաքներ ու շրջաններ, այլև Արևելյան Եվրոպա, Մերձավոր ու Միջին արևելքի տարածքներ և այլուր: «Եւ թէ հաշուես ի Պուղտանայ մինչև Ստամպօլ, պուծուն Ուռումելին մինչև մեծն Վանատիկ, նա՛ չկայ քաղաք, գեղ կամ չիֆտլիկ, որ հայ չկենայ», – գրում է Սիմեոն Լեհացին[48]: Նրա տվյալներով միայն Կոստանդնուպոլսում հայ գաղթականների թիվը հասնում էր 40.000 մարդու[49]: Հենց այս հոծ խմբերն էին, որ բարդացրեցին իրադրությունը «ալթը ջեմաաթում»՝ պոլսահայ համայնքում: Եկվորները անխուսափելիորեն պետք է առնչվեին մայրաքաղաքի հայ բնակիչների սոցիալական, կենցաղային, կրոնական և այլ հարաբերություններին՝ ծանրացնելով տեղացիների հոգսերը և հիմնականում ազատ մնալով նրանց հարկային բեռը այս կամ այն չափով

---

[46] Ընդարձակ օրացոյց, 1908, էջ 291 – 292:

[47] Բ ա բ գ է ն եպ., նշվ. աշխ., էջ 440: Մ.Օրմանյանի և Ա.Ալպոյաճյանի այս ելակետը անվերապահորեն ընդունում է Հ.Ճ. Սիրունին, ըստ որի, Տրապիզոնի և Ղրիմի գրավումից հետո (1461, 1475) այս շրջանները մտան պատրիարքության ենթակայության ներքո և որ պատրիարքության ենթակա թեմերը ավելացան Սելիմ 1-ի ժամանակ, երբ կայսրության կազմի մեջ մտան Կիլիկիան, Սիրիան, Միջագետքը, Մալթիան, Պաղեստինը և Եգիպտոսը (Հ.Ճ.Սիրունի, նշվ. աշխ., էջ 298): Սակայն նշված հեղինակները որևէ փաստ չեն բերում այդպիսի ենթադրության օգտին: Մ.Օրմանյանը ինքն է նշում, որ հայ եկեղեցու նվիրապետության պատկերը վերականգնելու համար չկան կանոնավոր ցուցակներ (Մ. Օ ր մ ա ն ե ա ն. Ազգապատում, հ. Բ, էջ 2546), իսկ Հ.Ճ.Սիրունին գրում է, որ հայտնի չեն նշված ժամանակաշրջանի (XV – XVIIդդ.) ոչ հայ եկեղեցու թեմերի ճիշտ քանակը, և ոչ էլ դրանց սահմանները (Հ. Ս ի ր ո ւ ն ի, նշվ. աշխ., էջ 300):

[48] Սիմէոն Դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն, Վիեննա, 1936, էջ 8:

[49] Նույն տեղում:

բաժանելու պարտականությունից: Խուլ դժգոհությունը և հակասությունները խորանում էին երկուստեք՝ տեղաբնակների և գաղթականների միջև: Զվճարված կամ թերի և ուշացումներով վճարվող արքունական հարկը (միրի), հայ համայնքի խառնակ վիճակը, հակասությունները բարձրակարգ կղերի շրջանում այս ամենը խորացնում էին երկպառակությունները: 1612թ. այս լարվածությունը հասցրեց նրան, որ պատրիարք Գրիգոր Կեսարացին գահընկեց արվեց Զաքարիա Վանեցի և Հովհաննես Խուլ վարդապետների կողմից, որոնց հարել էր նաև Գրիգոր Դարանաղցին: Պատրիարքական իրավասությունները բաժանվեցին այս երեքի միջև, սուլթանական բերաթը ստանալով նրանցից մեկի՝ Զաքարիայի անունով: Այս առաջին բաժանումը որոշ տվյալներ է տալիս Կոստանդնուպոլսի պատրիարքի իրավասության սահմանների վերաբերյալ: Նախ, Օսմանյան Թուրքիայի հայաբնակ շրջանները բաժանվեցին երեք մասի. «Եւ զամենայն երկիրն երիս մասունս բաժանեցաք. յառաջին ամին Զաքարէն դրաք գլուխ. Ըստամբոլ նորա տուաք բնական պարաթին հին դապալայի երկրովքն եւ զԱնատոլի փարաքանդան (ցրված գաղթականները – Ա.Խ.) եւ զմեր քաղաքս ինձ ետուն եւ Յովհաննէսին՝ զամենայն Ուռումելն, բայց Ըռատօզուս», – գրում է Գրիգոր Դարանաղցին[50]:

Մեկ տարի անց, 1613թ., կատարվում է պատրիարքական իրավասությունների երկրորդ բաժանումը: Դարանաղցուն բաժին է ընկնում Ռումելին (կայսրության եվրոպական մասը)՝ Ղալաթիայի հետ, Զաքարիային՝ Անատոլուի փարաքանդան՝ Սկյուտարից այն կողմ, իսկ Խուլ Հովհաննեսին՝ Կոստանդնուպոլիսն ու Սեբաստիան՝ մինչև Կաֆա (Ղրիմ) և Քյոթիա (Քյոթահիա): Այս անգամ պատրիարքական բերաթը տրվել էր Խուլ Հովհաննեսին[51]:

1620թ. կատարվեց երրորդ բաժանումը, միայն Խուլ Հովհաննեսի և Զաքարիայի միջև (Դարանաղցին հեռացել էր եռապետությունից): «Եւ Խուլն Ըստամբոլ կու տիրէր եւ ամենայն Անատոլուն եւ Զաքարէն յՈսկոդարն նստէր եւ ամենայն Ուռումէլ փարաքանդայիցն», – գրում է Դարանաղցին[52]:

XVII դ. առաջին քառորդին պատրիարքական իշխանության այս բաժանումները ցույց են տալիս, որ օսմանյան իշխանությունները Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանը չեն դիտել որպես կայսրության մեջ բնակվող ամբողջ հայության հոգևոր կենտրոն, հակառակ դեպքում՝ մեկ պատրիարքի հոգևոր իշխանության տակ կմնային նոր գոյացած կամ սակավամարդ դարձած հայաբնակ տարածքները: Մյուս կողմից, պատրիարքական իշխանությունը երեք անձի մեջ բաժանելը (անկախ այն բանից, որ նրանցից մեկը ստանում էր պատրիարքական բերաթը, իսկ մյուս երկուսը հաստատվում էին էմրով՝ հրամանով)[53], ցույց է տալիս, որ իշխանությունները հակամետ էին ընդլայնելու պատրիարքական իշխանության իրավունքներն ու սահմանները: Ամբողջ խնդիրն այն է, որ Կոստանդնուպոլսի պատրիարքությունը 1612

---

[50] Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ, Երուսաղէմ, 1915, էջ 180:

[51] Նույն տեղում, էջ 181:

[52] Նույն տեղում, էջ 192:

[53] Նախքան պատրիարքական իշխանության բաժանումը, Դարանաղցին «Հրամանաւ թագաւորին» երկու տարի հովվում էր Կամախի և Էրզրումի փարաքանդան՝ գաղթական հայությանը, ընդ որում, հաստատվելով Թոփգաբուում՝ պատրիարք Գրիգոր Կեսարացու

թվականից հետո, կապված ժողովրդագրական նոր տեղաշարժերի հետ, սկսում էր նոր թեմերի վրա իր իրավասությունները տարածելու կամ նոր թեմեր ձեռք բերելու գործընթացը, որը տևելու էր մի երկարատև ժամանակաշրջան: Այս գործընթացը ավարտուն կերպարանք պետք է ստանար միայն XVIII դարում: XVII դ. երկրորդ կեսին ևս պատրիարքությունը դեռևս բավական հեռու էր օսմանյան տարածքների առաջնորդությունները տնօրինողի կարգավիճակից: Ավելին, պատրիարքարանը դեռևս պատահական և թույլ կապեր ուներ Արևմտահայաստանի և կայսրության շատ հայաբնակ վայրերի վիճակների և թեմերի հետ: Դրա ակնառու վկայությունն են «Օսմանյան Թուրքիայի հայոց կաթողիկոսության» հետ կապված երկու միջադեպերը 1631 և 1664 – 65 թվականներին: Երկու դեպքում էլ հետապնդվում էր Էջմիածնից անկախ կաթողիկոսություն ստեղծելու գաղափարը, անտարակույս, Էջմիածնին պատկանող վիճակներն ու թեմերը խլելով և դրանց միավորմամբ: Առաջինը այս մտահղացումը փորձեց իրականացնել Զաքարիա պատրիարքի և նրա համախոհների դրածոն՝ ժամանակին Էջմիածնի կաթողիկոս հռչակված Սահակը: Փորձը ձախողվեց մեծ վեզիրի հրամանով, իսկ ինքը՝ Սահակը, հատուցեց գանակոծվելու և մահմեդականացվելու գնով[54]: Երկրորդ միջադեպը, որի գլխավոր դերակատարը Եղիազար Այնթապցին էր, համեմատաբար տպավորիչ եղավ. 1665թ. նա Հալեպում օծվեց կաթողիկոս[55], սակայն Մեհմեդ Դ-ն նույն թվականին վերահաստատեց Հակոբ Ջուղայեցու կաթողիկոսական իրավասությունները՝ անվավեր համարելով Եղիազարին նախապես տրված կաթողիկոսական բերաթը[56]: Նշված փաստերը վկայում են հետևյալը. եթե Կոստանդնուպոլսի պատրիարքության հոգևոր իշխանությունը տարածվեր Արևմտահայաստանում, ապա կբացառվեր այդ տարածքներում առանձին կաթողիկոսություն ստեղծելու գաղափարն իսկ: Նույն Եղիազար Այնթապցին կաթողիկոսական բերաթը ստանալուց հետո հասցրել էր ոչ միայն օրհնության կոնդակ ուղարկել երկրի բոլոր կողմերը, այլև ոմն Հովհաննես վարդապետի նշանակել Թոքատի առաջնորդ[57], որ չէր կարող անել, եթե Թոքատը ենթարկվեր Կոստանդնուպոլսի պատրիարքությանը:

XVII դ. երկրորդ կեսին ևս Կոստանդնուպոլսի պատրիարքությունը շարունակում էր մնալ իր նախկին իրավասությունների սահմաններում, և հենց այս իմաստով էլ պետք է հասկանալ Մարտիրոս Ղրիմեցու տեղեկությունը. «Ի թվականիս մերոյ ՌՃԸ (1659) յամսեանն... ի մայիսի Իե (25) ... կամօքն Աստուծոյ և հրամանաւ Քէօփրուլու Մէհմէթ փաշա վէզիրին զդեցաք զխլաթն արքունաընձեռ պատրիարք անուամբ, որ և տեսուչ-գէտ և հովիւ կոչմամբ ի վերայ տեառնական հօտիս մեր, ի քաղաք Ըստամպօլ նուաստ վարդապետս Մարտիրոս Ղրիմեցի...»[58]: Այսպիսի համեստ ձևակերպումներից էլ առաջ, սակայն, հայ կրոնական կենտրոնների միջև ծավալվել էր մրցակցություն՝

---

[54] Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1621 – 1640), հ. Բ (կազմ. Վ.Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան), Ե., 1978, էջ 331:

[55] Ստորագրութիւն սրբոյ քաղաքին Երուսաղէմի քննութեամբ համառօտեալ ի Հաննա և ի Մարինոս պատմաղրաց, Երուսաղէմ, 1859, էջ 192 – 193:

[56] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1, վավ. 64, թղթ. 1ա, վավ. 51:

[57] Սիոն, 1940, N 5-6, էջ 153, N 10 - 11, էջ 383:

[58] Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, մասն Գ, էջ 854 – 855:

Արևմտահայաստանի վիճակներին տիրանալու համար: Էջմիածնական վաղեմի վիճակների նկատմամբ իր հավակնություններն էր ցուցադրում Աղթամարի կաթողիկոսությունը: Հիջրայի ՌԻԳ (1650) թվականին, ըստ Սիմեոն Երևանցու, Աղթամարի Գրիգոր կաթողիկոսը, շրջանցելով Էջմիածնի իրավունքները, «ֆարման բերէ ի յօսմանցւոց թագաւորէն վասն Վանայ, Համթայ, Արճշու, Խլաթու, Մշու և Բաղէշու և այլոց մերձակայիցն, թէ՝ այսոքիկ ի քնէ մեր են վիճակք, այլք սեպագուիք զաւթեալ են և ես մնամ ի ներքոյ մրրիի»[59]: Փիլիպոս կաթողիկոսը, սակայն, կարողանում է հետ բերել նշված վիճակները՝ անվավեր համարել տալով հօգուտ Աղթամարի տրված ֆերմանը: Դավիթ Բաղիշեցին ևս (XVII դ.) ներկայացնում է Էջմիածնի և Աղթամարի հակասությունների մի դրվագ. 1662թ. Աղթամարի կղերականներից ոմանք, գրում է նա «Հակառակ կացին Քրիստոսադիր սուրբ Աթոռոյն Էջմիածնի, կաշառս ետուն Վանայ փաշային Ըճ (800) կարմիր ոսկի՝ ձեռամբ Աղթամարայ աղին, որ դուլ է (պետք է կարծել՝ ենիչեր աղասիին – Ա.Խ.) և արդ առին ի փաշայէն, գնացին ամր (հրաման – Ա.Խ.) հանին ի Ստամբօլայ, թէ Վան քաղաք և Բաղէշ Աղթամարայ լինի»[60]:

Այս վիճակները ձեռքից ձեռք էին անցնում ոչ միայն սուլթանների կամ մեծ վեզիրների ընչաքաղցության կամ դյուրափոփոխ տրամադրությունների պատճառով: Այստեղ կարևոր է նաև այն, որ օսմանյան կայսրությունում գտնվող Էջմիածնական վիճակներն իրենց եկամտի մի նշանակալի մասը հատկացնում էին Էջմիածնին, որ դժվարացնում էր պետական հարկի՝ միրիի գանձումը, որից էլ բողոքում կամ իր հիմնավորումներն էր բխեցնում, ինչպես տեսանք, Աղթամարի կաթողիկոսը[61]: Եվ վերջին հաշվով այս՝ նյութական շահագրգռվածությունն էր ընկած օսմանյան պետական անձանց վերաբերմունքի հիմքում: Հակոբ Ջուղայեցին Եղիազարի կաթողիկոսությունը կարողացավ անվավեր համարել տալ հատկապես օսմանյան կառավարողներին շահագրգռելու միջոցով և ոչ թե իր անձնական հմայքի շնորհիվ, ինչպես կարծում է Մ.Զամչյանը[62]: Զաքարիա սարկավագը իրավացի էր, երբ ցույց էր տալիս, որ Հակոբի իրավունքները սուլթանը վերահաստատել էր անցանկալի հետևանքներից խուսափելու համար: Կայսրությունում թեմերից զրկվելով՝ կաթողիկոսը, հենվելով պարսից օժանդակության վրա, կարող էր կասեցնել ուխտավորների հոսքը Երուսաղեմ, որի բերած շոշափելի օգուտներից կզրկվեր պետության գանձարանը[63]: Օսմանյան պետության համար, սակայն, իբրև ցանկալի հեռանկար էր մնում Կոստանդնուպոլսի պատրիարքության միջոցով երկրի տարածքում գտնվող առաջնորդությունների ու թեմերի վերահսկողությունը: Դա էր, ի վերջո, պայմանավորելու պատրիարքության կողմից Էջմիածնական վիճակների ու թեմերի հետզհետեյուրացման անկասելի ընթացքը: Էջմիածնի և Աի, ինչպես և Էջմիածնի և Աղթամարի հակամարտությունները՝ վիճակները տնօրինելու հարցում,

---

[59] Սիմոն Երևանցի, նշվ. աշխ., էջ 92-93:

[60] Մանր ժամանակագրություններ, XIII - XVIII դդ., հ. 2 (կազմ. Վ. Ա. Հակոբյան), Ե., 1956, էջ 362 - 363:

[61] Աղթամարի հետ Էջմիածնի վեճը շարունակվում էր նաև հետագայում, Ղազար Ջահկեցու ժամանակ, որին դարձյալ վիճակվեց նորոգել տալ Աղթամարի կողմից այս էլ որերորդ անգամ խլված վիճակների վերաբերյալ ֆերմանը (Սիմէոն Երեւանցի, նշվ. աշխ., էջ 95 -97):

[62] Մ. Զամչեան, նշվ. աշխ., էջ 714:

[63] Զաքարեայ սարկաւագի Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870, էջ 75 - 76:

հարատևող գործընթացներ էին, որոնց, ի վերջո, միջամուխ էր լինելու պատրիարքությունը XVIIIդ. սկզբներից՝ ձգտելով իրեն ենթարկել նշված վիճակները: Սակայն XVIդ. 2-րդ կեսին Կոստանդնուպոլսի պատրիարքությունը հազիվ թե որևէ նշանակալի հաջողություն արձանագրեր նոր վիճակներ ձեռք բերելու տեսակետից: 1690-ական թթ. կեսին Կոստանդնուպոլսում ֆրանսիական դեսպանատան քարտուղար Պտի դը Լակրուայի հավաստմամբ, Կոստանդնուպոլսի պատրիարքը վերահսկում էր միայն իր արքեպիսկոպոսական վիճակը, այսինքն՝ Արևմտյան Հայաստանում՝ մինչև Թոքատ և Ռումելիայում՝ մինչև Դանուբ[64]:

Կարելի է կարծել, որ Կոստանդնուպոլսի պատրիարքությունը Օսմանյան Թուրքիայի տարածքներում գտնվող առաջնորդությունները իր ենթակայության տակ կառներ շատ ավելի վաղ, XVIIդ. երկրորդ կեսից, եթե դրան չխանգարեին տիրահոչակ պատրիարքական կոիվները (50 տարվա մեջ՝ 1650 - 1700թթ. պատրիարքական պաշտոնը ձեռքից ձեռք է անցել 27 անգամ, ընդսմին, մի քանի տարի պատրիարքական աթոռը թափուր է մնացել)[65]: Պատրիարքների արագ փոփոխությունները, այդ պաշտոնի համար հայ կղերական ու աշխարհիկ վերնախավի լարած ինտրիգներն ու դավերը թուլացնում էին պատրիարքական իշխանությունը, խանգարում նրան հուսալի կապեր հաստատել առաջնորդությունների և թեմերի հետ: Հաջորդ՝ XVIII դարում, մասնավորապես Հովհաննես Կոլոտի և Հակոբ Նալյանի պատրիարքության ժամանակներից է, որ Կոստանդնուպոլսի պատրիարքությունը պետք է իր իշխանությունը տարածեր գավառական առաջնորդությունների մեծ մասի վրա:

К ВОПРОСУ О ФОРМИРОВАНИИ КОНСТАНТИНОПОЛЬСКОГО АРМЯНСКОГО ПАТРИАРШЕСТВА (XV - XVII ВВ.)

А.А.ХАРАТЯН

Резюме

В армянской историко-филологической литературе предметом длительных дискуссий являлась проблема личности и карьеры духовного предводителя константинопольских армян в 1461 – 1478гг. Овакима. Следует полагать, что упомянутый в 1438г. Оваким из поселения Бера близ Константинополя (а не Бериа-Алеппо) и упомянутый в 1438г. константинопольский архиепископ Оваким, а также упомянутые в 1445г. Кутинский, в 1447г. Бурсинский и Константинопольский архиепископы Овакимы, как и духовный предводитель армян Филипе (Пловдив) Оваким, упоминаемый в 1469г., суть одно и то же лицо. Далее до 1540г. в армянских документах титул "патриарха" не приписывался константинопольскому духовному предводителю армян. Его величали титулами «*հայրապետ*», «*արհիեպիսկոպոս*», «*եպիսկոպոս*». Однако и после 1540г. длительное время власть константинопольского патриарха не распространялась

[64] Հ. Պէրպէրեան, նշվ. աշխ. (Հանդէս ամսօրեայ, 1964, N 7-9, էջ 344):

[65] Տվյալները՝ ըստ Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի Հայոց, էջ 184-186:

на епархии в Западной Армении и в других подвластных Оттоманской Турции регионах, населенных армянами. Свидетельством этого являются не только факты распространения патриаршеской власти в первой четверти XVII в., но и два эпизода, имевших место в 1631 и 1664 – 1665гг., связанных с созданием армянского католикосата Оттоманской Турции: они показывают, что этот новый католикосат должен был быть создан путем изъятия у Эчмиадзина епархий, находившихся в Западной Армении и других регионах империи.

Это означает, что в этот период власть константинопольского армянского патриаршества не распространялась на епархии в названных регионах.

Установление духовной власти константинопольского патриаршества в Оттоманской Турции было сложным и длительным процессом, который должен был завершиться в будущем, в основном до конца XVIIIв.